Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
ապրիլի 23-ի N 495 - Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՕԴԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

1. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն հավելվածով հաստատված աջակցության ծրագրի նպատակն է խթանել Հայաստանի Հանրապետություն օդային ճանապարհով նոր ուղղություններից ժամանող ուղևորների թիվը՝ նպաստելով ներգնա ուղևորությունների, Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններում ուղևորափոխադրումների ծավալների ավելացմանը:

2. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2. Սույն աջակցության ծրագրով տրամադրվում է ֆինանսական օժանդակություն այն ավիաընկերություններին, որոնք կփոխադրեն օդային ուղևորներին նոր ուղղություններից Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» օդանավակայաններ:

3. Սույն աջակցության ծրագրի շրջանակներում նոր ուղղություններ են համարվում Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող այն բնակավայրերը (այդ քաղաքը սպասարկող բոլոր միջազգային օդանավակայաններով), որտեղ սույն աջակցության ծրագրի շրջանակներում շահառու հանդիսացող ավիաընկերությունների կողմից առաջին չվերթը սկսելու պահից նախորդող 12 ամիսների ընթացքում ցանկացած ավիաընկերության կողմից իրականացված չվերթերի քանակը միաժամանակ IATA ամառային ժամանակահատվածում (մարտի վերջին կիրակի օրվանից ներառյալ մինչև հոկտեմբերի վերջին շաբաթ օրը) չի գերազանցել 14-ը և IATA ձմեռային ժամանակահատվածում (հոկտեմբերի վերջին կիրակի օրվանից ներառյալ մինչև մարտի վերջին շաբաթ օրը)՝ 10-ը: Ընդ որում, Գյումրու

«Շիրակ» կամ Երևանի «Զվարթնոց» օդանավակայաններից նոր ուղղությունների համապատասխանությունը սույն կետի պահանջներին դիտարկվում են առանձին:

4. Սույն հավելվածի 2-րդ կետում նշված ֆինանսական օժանդակությունը տրամադրվում է նոր ուղղությունից փոխադրվող և Հայաստանի Հանրապետություն մուտք գործած 2 տարեկանից բարձր տարիք ունեցող յուրաքանչյուր օդային ուղևորի համար հետևյալ սահմանաչափերով՝

1) Գյումրու «Շիրակ» օդանավակայան փոխադրված սույն կետում նշված յուրաքանչյուր օդային ուղևորի համար՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ.

2) Երևանի «Զվարթնոց» օդանավակայան փոխադրված սույն կետում նշված յուրաքանչյուր օդային ուղևորի համար՝ 20 000 (քսան հազար) դրամ:

5. Սույն որոշմամբ սահմանված աջակցության ծրագրից օգտվելու և ֆինանսական օժանդակություն ստանալու համար սահմանվում են հետևյալ վերջնաժամկետները՝

1) սույն որոշման պահանջներին համապատասխանող շահառու ավիաընկերությունները պետք է սույն որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից հաշվարկած մինչև 2026 թվականի հունիսի 1-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացնեն սույն որոշման պահանջներին համապատասխանող այն նոր ուղղությունների մասով տեղեկատվությունը (չվերթերի ուղղությունները, չվերթերը մեկնարկելու ժամկետները, չվերթերի հաճախականությունները), որոնցով շահառու ավիաընկերությունները կանոնավոր չվերթերը մեկնարկելու են սույն որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից հաշվարկած մինչև 2027 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում.

2) շահառու ավիաընկերությունները պետք է սույն որոշման պահանջներին համապատասխան նոր ուղղություններով կանոնավոր չվերթերը մեկնարկեն սույն որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից հաշվարկած մինչև 2027 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում.

3) սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամանակահատվածից դուրս ժամանակահատվածում նոր ուղղություններով կանոնավոր չվերթերի մեկնարկի

դեպքում սույն որոշմամբ սահմանված ֆինանսական օժանդակության տրամադրում չի իրականացվում:

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Սույն հավելվածով նախատեսված ֆինանսական օժանդակությունը տրամադրվում է սույն որոշման N 2 հավելվածով շահառու հանդիսացող ավիաընկերություններին հետևյալ կարգով՝

1) չվերթերի մեկնարկից հաշվարկված առնվազն 30 (երեսուն) օրացուցային օր առաջ շահառու ավիաընկերությունը էլեկտրոնային եղանակով դիմում է լիազոր մարմնին՝ գրության մեջ ներկայացնելով չվերթերի ուղղությունները, չվերթեր մեկնարկելու ժամկետները և այդ ուղղություններով կանխատեսվող ուղևորահոսքի ծավալները.

2) լիազոր մարմինը դիմումը ստանալու օրվանից հաշվարկած 15 (տասնհինգ) օրացուցային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է ավիաընկերությանը դիմումով ներկայացվող ուղղությունների՝ սույն հավելվածի 3-րդ կետով հաստատված պահանջներին համապատասխանելու կամ չհամապատասխանելու մասին.

3) շահառու հանդիսացող ավիաընկերությունը սույն որոշմամբ հաստատված պահանջներով չվերթերը մեկնարկելուց և իրականացնելուց ամեն օրացուցային եռամսյակից հետո մեկ ամսվա ընթացքում լիազոր մարմին է ներկայացնում յուրաքանչյուր նոր ուղղության համար առանձին հաշվետվություն՝ հետևյալ ձևաչափով՝

Ուղղության անվանումը	Իրականացված չվերթերի քանակը	Նոր ուղղություններից Հայաստանի Հանրապետություն փոխադրված 2 տարեկանից բարձր տարիք ունեցող օդային ուղևորների ընդհանուր քանակը, մարդ

Միաժամանակ, սույն ենթակետում նշված ձևաչափով ներկայացվող տեղեկատվությանը կից, պահպանելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջները, ցանկում ներկայացվում է Հայաստանի Հանրապետություն փոխադրված 2 տարեկանից բարձր տարիք ունեցող օդային ուղևորների մասին ստորև ներկայացված աղյուսակի ձևաչափով հետևյալ տեղեկատվությունը՝

Անունը և ազգանունը (լատինատառ)	Ծննդյան տարեթիվը (օր/ամիս/տարի)	Սեռը	Քաղաքացիությունը	Չվերթի համարը և օրը, որով օդային ուղևորը ժամանել է Հայաստանի Հանրապետություն

Ընդ որում, սույն ենթակետով ներկայացվող տեղեկատվությունը պետք է լինի «.xls» կամ «.xlsx» ձևաչափի.

4) լիազոր մարմինը 6-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը ստանալու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում այն ուղարկում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն (այսուհետ՝ ծառայություն).

5) ծառայությունը 6-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված կարգով ստացված տեղեկատվությունը ուսումնասիրում է և 15 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է լիազոր մարմնին ցանկում ներկայացված այն ուղևորների տվյալները, որոնք մուտք են գործել Հայաստանի Հանրապետություն.

6) լիազոր մարմինը 6-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված կարգով տեղեկատվությունը ծառայությունից ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է ավիաընկերությանը այն ուղևորների ցանկը, որոնց համար սույն որոշման բոլոր պահանջներին համապատասխանելու դեպքում կտրամադրվի ֆինանսական օժանդակություն.

7) Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններ սույն աջակցության ծրագրի շահառու ավիաընկերությունների կողմից նոր ուղղություններից փոխադրված և Հայաստանի Հանրապետություն մուտք չգործած օդային

ուղևորների համար ավիաընկերություններին ֆինանսական օժանդակություն չի տրամադրվում.

8) ֆինանսական օժանդակությունը լիազոր մարմինը տրամադրում է շահառու ավիաընկերությանը յուրաքանչյուր 2 (երկու) իրար հաջորդող եռամսյակներից հետո՝ ավիաընկերության կողմից դիմում ներկայացնելու օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում հետևյալ բանաձևով՝

$$F = N \times P,$$

որտեղ՝

F-ը՝ շահառու ավիաընկերությանը վճարման ենթակա ֆինանսական օժանդակության ընդհանուր գումարն է ամեն նոր ուղղության համար՝ դրամով,

N-ը՝ 2 (երկու) իրար հաջորդող եռամսյակների ընթացքում շահառու ավիաընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն նոր ուղղություն-ներից փոխադրված և Հայաստանի Հանրապետություն մուտք գործած և լիազոր մարմնի կողմից հաստատված 2 տարեկանից բարձր տարիք ունեցող օդային ուղևորների ընդհանուր քանակն է,

P-ն՝ յուրաքանչյուր օդային ուղևորի համար շահառու ավիաընկերությանը տրամադրվող ֆինանսական օժանդակության սահմանաչափն է՝ կախված նրանից, թե Հայաստանի Հանրապետության որ օդանավակայանով են օդային ուղևորները մուտք գործում Հայաստանի Հանրապետություն և, որը ներկայացված է յուրաքանչյուր օդանավակայանի համար սույն հավելվածի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում:

7. Սույն հավելվածի 6-րդ կետով Հայաստանի Հանրապետության դրամով հաշվարկվող ֆինանսական օժանդակության միջոցները լիազոր մարմինը փոխան-ցում է շահառու ավիաընկերության կողմից Հայաստանի Հանրապետության բան-կերում բացված հաշվեհամարին, որը պետք է շահառու ավիաընկերության կողմից 5-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված դիմումի հետ միասին ամբողջական բանկային ռեկվիզիտներով ներկայացվի լիազոր մարմնին:

8. Յուրաքանչյուր նոր ուղղության համար ֆինանսական օժանդակությունը տրամադրվում է նոր ուղղությամբ առաջին չվերթի մեկնարկի օրվանից 24 (քսան-չորս) ամսվա համար:

9. Եթե 8-րդ կետում նշված ժամկետի ընթացքում այլ շահառու ավիաընկերություն նույնպես դիմում է տվյալ նոր ուղղությամբ աջակցության ծրագրից օգտվելու և ֆինանսական օժանդակություն ստանալու համար, ապա, սույն որոշման պահանջներին համապատասխանելու դեպքում, այն տրամադրվում է մինչև տվյալ նոր ուղղությամբ առաջին ֆինանսական աջակցության տրամադրման ժամկետի ավարտը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ